

Կարապետին Քրիստոսի, գեղեցկաւ մրգօք ընծայելով առ ի կամակ հիւանդիս. նաեւ ազօթանուէր մաղթանօք հասայք յօգնութիւն կրկնակի տկարութեանս. եւ յանապատում ձեր (ի) սեղան կոչեալ կերակրեալ՝ մխրթարութեամբ մեծարեցիք»⁴⁰:

Այցելած է նաեւ Կարբոյ Յովհաննավանքը, ուր ծանօթացած եւ բարեկամացած է բանասէր եւ գրասէր Զաքարիա Սարկաւազի հետ. վերջինս կը գրէ այս առթիւ իւր 1686 թուին գրած Յիշատակարանին մէջ ի Կարբի⁴¹ հետեւեալը, զոր վերագոյն կարգացինք արդէն. «...ընդ նոսին յիշեցէք եւ զԲիւզանդացի պարոն Երեմիայ գիտնականն եւ զորդի նորա զՄաղաքիա պատանի զնկարիչ պատկերաց եւ զոսկածաղիկ արարօղ, որք են բուն բարեկամ ինձ թշուառացեալ Զաքարէիս»:

Նշիտազար կաթողիկոսի հովանաւորութեան տակ վայելեց Երեմիա անշուշտ ուրախ ժամեր: Այս առթիւ ծանօթացաւ նաեւ հայրենեաց շատ հնալայրերու հետ. «Տեսաք, կը զրէ Երեմիա, աչօք փոքր տեղիս՝ զԱնի քաղաք եւ զգաւառն, զԿարս եւ զգաւառն, եւ զԿարին եւ զսահմանս Պարսից ամայի»⁴². այս վերջիններս անշուշտ երթալու եւ վերադարձի ժամանակ տեսած է:

Իբր տարի մը զեղերեկէ յետոյ Հայաստան, դարձաւ Երեմիա Կ. Պոլիս, ուր գտաւ ազգային եկեղեցական գործերը աւելի խանգարուած: Այս առթիւ գրեց, իւր համբաւեալ թուղթն առ Նղիազար, 1690⁴⁴: Հոս ի մէջ այլոց կը գրէ Երեմիա.

«Այլ ես, որ կամիմ հնարս գտանել խաղաղութեան, անգոսնիմ յանուպայ անձանց, յասել նոցա թէ ո՞ր կացոյց զքեզ իշխան եւ դատաւոր ի վերայ մեր. նմին իրի եւ անյոյս լեալ լեցի ի խօսելոյ. եւ իբրեւ վերջին ազգարարութիւն գրեցի զայս թուղթ զի անպարտ եղէց առաջի Աստուծոյ»⁴⁵:

Իրօք ալ լուց Երեմիա: Այս թուականէն յետոյ չենք լսեր իր ձայնը:

⁴⁰ Հ. Վ. Հայունի՝ Կուսաստանք Հայաստանի մէջ. Բագմալէս, 1923, էջ 76. յտաւ ընդունած Ս. Ղազարու թ. 509 ձեռագրէն, որ է Գիրք պատմութեան: Այս գրուածքը կ'անուանէ Հ. Ղ. Ալիշան՝ Այրարատ, 189, «Պատմութիւն նորից նահատակաց» հմմտ. եւ թորգոմեան, 729:
⁴¹ Ձեռ. Էջմիածնի, թ. 158, թղ. 366 ա:
⁴² Ալիշան, Շիրակ, էջ 180. թորգոմ., 724:
⁴³ թորգոմ., 174—177:
⁴⁵ Ձամչ., 722. թորգոմ., 177:

Երեմիա վախճանեցաւ 1695ին. կ'ըսուի ի վերջ Ստամպուլոյ պատմութեան.

«Քէօմիւրճիւ օղլու Երեմիա չէլչպին, եղբայրն տէր Կոմիտասին հանգեաւ ՌձՈՊ»⁴⁶:

Մինաս Համթեցի Երուսաղէմի պատրիարքը 1696 մարտ 18 եւ 20 թուակիր Կ. Պոլսէն գրուած նամակներէն կ'իմանայ առաջին անգամ «ղմահ Քօմուրճի Երեմիային»⁴⁷:

Կը գրէ նաեւ Նփրեմ պատրիարք Կ. Պոլսոյ ի վերջ Դիոն. Արիսպազացոյ գրոց.

«Զայս գիրքս յետ վաղձանելոյ տեսուն Մովսէսի (Բջնեցոյ) աստուածաբանութեան բարունապետին անկեալ էր ի ձեռացէ ի ձեռք եւ եղեալ էին ի պատանդի, այս ինքն ի գրաւի, ձեռամբ ըՍտամպուլցի Քէօմիւրճի տէր Մարտիրոսի որդոյ Երեմեայ Չէլչպուն, զոր յայսմ ամի եղեւ հանգուցեալ. որում տէրն ողորմեացի հոգւոյ իւրում: Վասն որոյ եւ ես ետու զգրամ պատանդին եւ հանեալ առի զայս գիրքս եւ ստացայ...: Զայս եղեւ ՌձՈՊ թուականիս Հայոց ի յարքայանիստ մայրաքաղաք Կոստանդնուպոլիս»⁴⁸:

Երեմիայի Գրութիւններուն եւ Նկարազարին վրայ կը թողում խօսիլ յաջորդիւ:

(Շարունակելի:) Հ. Ն. ԱԿԻՆՅԱՆ



ՆՆԻ ԵՐՉԵՆԵԳՐՈՒԹԵՆՑՍ ԸՌԹԻՒ*

Անցեալ տարի «Հանդէս»ի մէջ Հ. Ն. Վ. Ակինեան երկու զխոտղութիւն ըրած էր «Հայերէն արձանագրութիւնք Անուոյ, Բագնայրի եւ Մարմաշինու» աշխատասիրութեանս առթիւ:

Աշխարհիս վրայ չկայ գործ մը, որ քննադատութեան տակ չի յնայ: Բացառութիւն չկայ այս մասին: Ուստի՝ իմ երկասիրութիւններս անքննադատելի համարելէ բոլորովին հեռու եմ: Բայց երբ կը նկատեմ, թէ սխալ հիմերու վրայ հաստատուած քննադատութիւն մըն է կատարուածը, այն ալ՝ բանարուածը, այն ալ՝ բանարուածը, այն ալ՝ բանարուածը:

⁴⁶ թորգոմեան, 178/79:
⁴⁷ Անդ., 757:
⁴⁸ Ձեռագիր Էջմիածնի, թ. 2503:
* Կը հրատարակեմ մեր յարգելի Բարեկամին այս տողերը, դնելով առընթեր Հ. Ն. Ակինեանի պատասխանը:

տութիւն մըն է կատարուածը, այն ալ՝ բանարուածը, այն ալ՝ բանարուածը, այն ալ՝ բանարուածը:

Արդ, Հ. Ակինեանի երկու զխոտղութիւններէն մին՝ Անիի Մայր եկեղեցւոյ զլիսաւոր արձանագրութեան (թ. 8) առաջին տողին մասին է, որ կը վերջանայ երեք փակագիր տառախմբով.

Առաջին տառախմբը լուծելով կ'ունենանք՝

ԲԵՆԻ
ԵՐԿՐՈՐԳԸ ԼՈՒԾԵԼՈՎ Կ'ՈՒՆԵՆԱՆՔ՝
ԱՄԻՆ
ԵՐՐՈՐԳԸ ԼՈՒԾԵԼՈՎ Կ'ՈՒՆԵՆԱՆՔ՝
ԳՐԷ:

Հետեւաբար, ամբողջութիւնը կը կարդանք՝

ԲԵՆԻԱՄԻՆ ԳՐԷ:

Ընթերցումիս ճշգրտութեան ապացոյց է նաեւ այն, որ արձանագրութեանս վերջին տողը (թ. 9, տ. 9) կը յայտարարէ, թէ՛ «Գրեցաւ յիշատակարանս ի ձեռն իմ՝ ԲԵՆԷ», «Գրեցաւ յիշատակարանս ի ձեռն իմ՝ ԲԵՆԷ», ընդ որ ես կը կարդամ՝ «Բենիամինէ», ընդ որ նելով որ «Բենէ» ձեւն համառօտութիւնն է «Բենիամինէ»ի:

Հ. Ակինեանի երկրորդ զխոտղութիւնը՝ Անիի ամենահին արձանագրութեան (թ. 1) չափազանց թուականի մասին է, զոր կասկածելի կը գտնէ Վեր. Հայրը:

Այս արձանագրութիւնը փորագրուած է Անիի միջնաբերդին դադաթը կանգնուած հին սագաշէն եկեղեցիի մը հարաւային պատին վրայ: «Սագաշէն» բառը կը ստորագծեմ, չեչտելու համար չէնքիս կարեւորութիւնն եւ միանգամայն եկեղեցւոյս՝ ամբողջ Հայաստանի ամենահին հաստատութիւններէն մին ըլլալը, որ զուրկ է համեմատաբար յետնադարեան սրածայր կլոր դմբթէ կամ կաթողիկէ (coupole):

Արձանագրութեանս մէկէ աւելի կարեւորութիւնն զգալով՝ 1903ին նախապէս հրատարակեցի թերթերու մէջ, լսելու համար բանասէրներու կարծիքը:

Այո՛, զխոտղութիւններ եղան, բայց բոլորն ալ գուրկ էին կարեւորութեան: Ոմանք ըսին, որ հոն գործածուած Ա-երը՝ զեն կրնար ժ-ժԱրդ գարերէն յտաւ գրուած ըլլալ, առարկելով թէ հնագոյն Ա-երը՝ մինչեւ ժ-ժԱրդ գար՝ կը գրուէին աջա-

կողմեան սիւնակին վրայ օղակ մը կազմելով իսկ նոյն դարերէն ետք՝ արդէ սովորական ձեւն առած է Ա-ը:

Սակայն՝ նկատեցի, որ ժրգ դարէ յառաջ զոյութիւն ունեցող արձանագրութիւններ՝ այն առարկութեան դէմ կ'ելլեն:

Առնենք՝ օրինակի համար՝ Քալինի Ուխտաւոր վանականի արձանագրութիւնը, 783 թուականին գրուած: Հոն կը տեսնենք, որ քսան անգամէ աւելի կրկնուած բոլոր Ա-երն ալ մեր սովորական Ա-երն են, այսինքն՝ աջակողմեան գիծը միասին, առանց օղակ կազմելու: (Պատկերը տես՝ «Շողակաթ», Տխտ. է, նկար 11:)

Նոյնը կը տեսնենք նաեւ Արուծի Ս. Գրիգոր եկեղեցւոյ արձանագրութեան մէջ, 867 թուականին գրուած: (Պատկերը՝ «Շողակաթ», Տխտ. ժ, նկար 12:)

ՀԱ թուականի մասին ոմանք ալ ըսին, թէ արձանագրութիւնը չի վերջանար ՀԱ տառերով, այլ ՀԱ՝ առաջին վանկն է ՀԱ ՅՈՅ ընթացիկ. հետեւաբար, բուն թուականը պիտի բաժնուի. հետեւաբար, բուն թուականը պիտի բաժնուի. հետեւաբար, բուն թուականը պիտի բաժնուի:

Այս առարկութեան ալ անհիմն ըլլալը արձանագրութեանս վերջին տողը ցոյց տալու համար՝ կը գտնեմ հոս թէ՛ արձանագրութեան եւ թէ՛ միանգամայն քովի քանդակարէն լուսանկարը*, ուր կը տեսնուի թէ արձանագրութիւնն իսկապէս կը վերջանայ ՀԱ թուականով, որմէ ետք՝ ո՛չ քովը եւ ո՛չ տակը՝ տառի հետք կ'երեւայ:

Արձանագրութեանս հնութեան հակառակորդներն՝ ասո՛ր ալ պատասխան գտան, ըսելով թէ այդ արձանագրութիւնը «կեղծ» է, եւ կամ՝ ուրիշ տեղէ բերուած զրուած է հոն, «ՀԱ»ի «ՅՈՅ»ը եւ թուականի մասը կլորջ քարը ձգելով մոտնալով հին տեղը:

Իսկապէս ցաւալի՛ առարկութիւն: Ուշադրութեամբ դիտեցէք արձանագիր երկու քարերու եւ քովի ու տակի քարերու համաման տեսակն, ինչպէս նաեւ քարերէ ոմանց համաչափ նոյնութիւնը, եւ կը համոզուիք առարկութեան անհիմն ըլլալուն:

Ասկէ զատ, վերի զխոտղութիւններն ընողներէն երկու գլխաւորներու — Գարեգին արքեպ. Յովսէփեանի ու Պրոֆ. Ն. Մատի — հրապարակային խոստովանութիւնները բա-

* Տեսնել շեղիմակիմ աշխատասիրութեան եւ Յովսէփեանի Հայ եկեղեցւոյ Գարեգինի մէջ: Խմբ.:

ւական են ապացուցանելու թէ իմ ընթերցումս ճիշդ է:

Գարեգին արքեպ. Յովսէփեան իր հրանալի «Շողակաթ»ին մէջ այս արձանագրութեան վրայ խօսելով կ'ըսէ:

«Անիի Միջնաբերդում, Կամսարականները բազմաթիւ եկեղեցու հարաւային պատի արձանագրութիւնը 722 (կարգա՛ 622) թուականից, եթէ արձանագրութեան 'ՀԱ, վերջին տառերը թուական ընդունինք: Պրոֆ. Մասկոպով կասկածում էր, բայց յետոյ իւր կասկածը ետ առաւ¹: Մենք եւս հակուած ենք թուական ընդունելու, որով Հայ թուականի ամենահին գործածութիւնը կ'ունենանք»: («Շողակաթ», եր. 172—173:)

Կ. Յ. ԲԱՍՄԱՋԵԱՆ



ՈՆԻԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ ԵՒ ՄԻՋՆԵՐԲԵՐԳԻ ԵԿԵՂԵՑԻՈՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՅՐԻՆ

1. Հանդ. Ա. մ. ս. 1931, էջ 660 խոստացած էի խօսիլ ընդ հուլի Անույ Մայր Եկեղեցւոյ հիմնադրութեան արձանագրութեան, մասնաւորապէս առաջին տողի երեք փակագիրներու վրայ: Չներեցին զբաղումներս կատարել խոստումս: Իմ փափագս էր միաժամանակ անդրադառնալ Չուրինաշվիլի յօդուածին, որ կասկածելի կը գտնէր արձանագրութեանս հարազատութիւնը: Թողովուրիչ առթի Չուրինաշվիլիին պատասխանս, պիտի զբաղիմ այս տեղ փակագիրներուն լուծմամբ¹:

Բաժանալեան այդ երեք փակագիրները կը լուծէ՝ «ԲԵՆԻԱՄԻՆ ԳՐԷ»: Նոյն Բենիամին անունը կը տեսնէ նաեւ արձանագրութեան վերջը, ուր արձանագիրը բացորոշ կը գրէ «ԲԵՆԷ»:

Շատ միամիտ ըլլալու է կարծելու համար թէ փորագրողին ազատ կամքին է թողուած պաշտօնական արձանագրութեան մը մէջ երկիցս իւր անունն անմահացնել: Ինձ ծանօթ չէ նման օրինակ մը: Փորագրիչն է

¹ Н. Марръ, Раскопки въ Ани въ 1904 году. Сп. 1906. Եր. 19.
² Աշքի առաջ ունիմ Կ. Բաժանալեանի լուսանկարը, որ շատ յաջող անուած է:

ԲԵՆԷ (հմմտ. ԲԵՆԻԿ) ... չունինք իրաւունք լրացնելու զայն ԲԵՆԻԱՄԻՆ:

Փակագիրներու ճշգրիտ լուծման համար մտադիր ըլլալու է, որ արձանագրութեան հեղինակը Եկեղեցւոյն աւարտման տարին երեք զանազան թուականներով նշանակած է այսպէս.

- ա. Ի ՎԵՑ Ռ ՆԼ ԵՒ Գ ԱՄԱՅՆ ԱԴԱՄԱ,
- բ. Ի Ռ ԵՒ ԲԺ ԱՄԻ ՄԱՐՄՆԱՆԱԼԻ ԱՍՏՈՒԱԾՆ ԲԱՆԻ
- գ. Չ ԵՒ ԺԱ ԱՄԻ ՀԱԻԱՏԱԼԻ Ի ՔՐԻՍՏՈՍ ՀԱՅՈՑ ԳՐԵՑԱԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՍ Ի ՁԵՌՆ ԻՄ ԲԵՆԷ:

Առաջին թուականն է Ազամայ՝ զրախտէն ելլելու տարին՝ 6433—5423/4 (ըստ Անդրէասի) = 1009/10:

Երկրորդն է փրկչականը՝ 1012—2 = 1010:

Երրորդը՝ Լուսաւորչականը, երակէտ առնուած 301 (—2) ուստի՝ 711 + 301 = 1012—2 = 1010:

Նկատի առնելով արձանագրութեան հեղինակի այս ճաշակը, պէտք է ենթադրել, թէ նաեւ Եկեղեցւոյն սկզբնաւորութեան տարին երեք զանազան թուականներով տուած ըլլայ ունինք՝

- ա. Ի ՆԾ Թ. ՀԱՅՈՑ.
- բ. + ՄԺԹ Թ. ՀՈՌՈՄՈՑ.
- գ. փակագիրներ:

Հայոց ՆԾ կը համապատասխանէ փրկչական 24 Փետ. 1001/23 Փետր. 1002 տարւոյն:

Հոռոմոց ՄԺԹ պէտք է իմանալ Վրաց թուականը, որուն հիմն է Հռոմիայ շինութեան թուականն եւ երակէտն՝ 780/81 + 219 = 1000:

Փակագիրներն ալ առանց տարակուսի թուական մը կը ներկայացնեն, եւ կը կարդամ՝

ՅՂ ԱՄԻ ՀԱԳԱՐԱՅԻՈՑ,
որ է Հիճրէի 390 տարին եւ ճշգիւ կը համապատասխանէ նախորդ թուականներուն, այն է 999 Դեկտ. 13—1000 Նոյ. 30:

Առաջին փակագիրը աջէն դէպի ձախ գրուած Յ մըն է, վրայի գլուխը միաժամանակ աջէն ձախ գրուած Ղ մը կը ներկայացնէ, այսպէս ըստ արարական գրչութեան փակագրուած: Երկրորդ փակագիրը առանց դժուարութեան կը կարդացուի ԱՄԻ. իսկ երրորդը, զոր Բաժանալեան ԳՐԷ կը կարդայ, հաւանօրէն Հագարացոց բառին սղումն է:

Քրիստոնէական Եկեղեցւոյ վրայ Մահմետական թուականի յիշատակութիւնը որպէս զի պայթակղութիւն չպատճառէ բարեպաշտներուն, հարկ տեսած է արձանագիրը փակագիրներով ներկայացնել:

Երկրորդ արձանագրութիւնն է.

- ԵՍ ԱԲ(Ի) ՍՈՂ(ՈՄ)
- ՎԱՐԳԱՊԵՏ ՇԻՆԷ
- ՅԻ ԶԵԿԵՂԷՑԻՍ (ԶԱՅՍ) Ի ԹՈՒԱԿԱՆ(Ո)ԻԹԵԱՆ ՀՍ

Բանասիրական զննութեամբ է. դարու համար վաղաժամ է քուակառուցելու բառին դործածութիւնը արձանագրութեանս մէջ «տոմար» կամ «թուական» իմաստով. առաջին անգամ ժ. դարուն կը պատահինք բաժնու յայ իմաստով, որ ապա ընդհանուր դործածութեան մէջ կը մտնէ: Նորութիւն է նաեւ վարդապետ բառին երեւումը իբրեւ Եկեղեցական տիրոջ. որ ժ. դարէն սկսեալ յատկացուած է կուսակրօն քահանայից, որոնք զաւագանի տուածութեամբ կը կարգուէին քարոզիչ եւ ուսուցիչ:

Նաեւ հնագրական տեսակէտով չի կրնար արձանագրութիւնն է. դարու պատկանելի, որ մեսրոպեան երկաթագիրները բաղմօք այլակերպուած են եւ կը գտնուին շրջապատէր, բոլորգրի աղղեցութեան տակ, այսպէս Ա, Բ, Գ, Դ, Մ, Ն եւ Տ. բայց յատկապէս Չ Թ, Կ, Ղ, Ս, Ն եւ Տ. բայց յատկապէս Չ Թ: Կան գրեր, որոնք թ. դարէն² սկսեալ երեւան կու գան արձանագրութիւններու մէջ, երեւան կու գան արձանագրութիւններու մէջ, կան դարձեալ գրեր, որոնք ժ. դարէն պարզուած են. գրերու այս ձեւափոխութիւնը բաւական է ինքնին արձանագրութեան ժամանակը ժ. դարը ցոյց տալու:

Կը զարմանամ թէ ինչպէս հայ հնագոյն արձանագրութեան ծանօթք չեն անդրադարձուած այս այնքան ակնբախ փաստերու, եւ յիշած շատ խախտալ ՀԱ գրերու վրայ, միտած են զայն 622 թուականէն համարելու. իսկ Բաժանալեան կը պնդէ տակաւին նոյն կարծեաց վրայ:

Բաժանալեան եւ ուրիշներ «Ի թուականութեան ՀՍ» կը կարդան ՀԱ եւ կ'իմանան

² Բաժանալեան գիտէ թէ ինչ ինչ նշանակուած 783ի եւ 867ի արձանագրութիւններու մէջ կը տեսնուին. բայց չի կրնար նոյնը ցոյց տալ 622էն քիչ յառաջ եւ քիչ ետք փորագրուած արձանագրութիւններու մէջ: Դարե՛ր կը բերեն իրենց հետ ինչպէս լեզուի նոյնպէս գրերու այլաձեւութիւն:

Հայոց ՀԱ թուականը, այն է 622: Ինչ իրաւամբ: Անշուշտ կարելի է զիջել ՀՍ կարդալու ՀԱ, ընդունելով թէ եղծուած է Ա-ի վերջապիծը: Բայց չ'ընծայեր արձանագրութիւնս որ եւ է կուսան «Ի թուականութեան ՀԱ» համարելու Հայոց թուական, քանի որ լուծած է «Հայոց» բառը. պէտք էր սպասել զէթ «Ի թուականութեան» ընթերցուածն ունենալ հոն: Բայց եւ այնպէս կը մնայ դեռ խնդրական, թէ է. դարու առաջին քարոզիչն ի կերպութեան էր Հայոց թուականը. հնագոյն արձանագրութեանց, ինչպէս հայ գրչագիրներուն եւ տարեգրիչներուն անձանօթ է այն մինչեւ թ. դար: Եթէ ընդունինք թէ «ՀԱ» Հայոց թուականն է, պիտի միտէինք տեսնել ներսէսագիր թուականն աւելի Սարլու հոն ներսէսագիր թուականն սկիզբն է կաւաղապետ թուականը, որուն սկիզբն է 1084: Այս հիմամբ պիտի ստանայինք 1155, որ գոնէ մերձաւորապէս կը համապատասխանէ բանասիրական եւ հնագրական ճանապարհով ստացուած ժամանակին, այն է ժ. թ. դարը:

Ես աւելի մէտ եմ սակայն արձանագրութիւնս անաւարտ կամ կիսատ համարելու. «ՀԱ» առաջին վանկն է «ՀաՅՈՑ» բառին. արձանագրութիւնը ունէր իւր շարունակութիւնը: Եթէ Եկեղեցւոյն ճարտարապետութիւնը աւելի հին է քան ժ. թ. դարը, պէտք է համարել արձանագրութիւնս Եկեղեցւոյն Չաքարեանց օրով նորոգութեան յիշատակաւ: Յամենայն դէպս շատ կանուխ է 622 թուականը արձանագրութեանս համար:

Հ. Ն. Ա.



Տօնակարգ Հայաստանեայց Եկեղեցւոյ. հոխոցեալ կայկական եւ երազական մայնագրութեամբ: Հատոր Ա: Կ. Պոլիս, տպ. «Կիւրճակերկ», Կ. Ն. Մագաանեան, 1931, 4⁰, էջ 87: Գիմ. 200 դր:

Հինգ ձեռնհաս անձերու աշխատասիրութիւնն է այս գործը, որ կը բովանդակէ հինգ Տաղաւարներու եւ այլ տօնական օրերու շարականները՝ մայնագրուած եւրոպական եւ նոր հայկական խաղաղութեամբ: Գրքիս առաջին էջերը կը զարգարեն լուսանկարները ամեն. (+) Գէորգ Ե. Կաթողիկոսին, (+) Գուրեան եւ Նարայեան Պատրիարքներուն, եւ